

պատմեաց աստանօր լուսարար սրբոյ Տաճարին՝ զտեսիլս հիանալիս, թէ ի հիւսիսոյ կողմանէն եկն սաստիկ կարկտախառն հեղեղ եւ ողողեաց զգանձատուն Սրբոյ Աթոռոյս եւ զտեղի Սրբոյ Գլխադրին:

Պատմեաց եւ այլ ոմն քրիստոնեայ ի նոյն աւուրսն, թէ տեսի զկաթողիկէ Սրբոյ Տաճարիս այնքան խոնարհեալ, մինչ գրեթէ ի քակտիլ մերձենայր:

Եւ մինչ մտախոհ լինեալ թէ զինչ արդեօք ցուցանիցեն տեսիլքս, յետ աւուրց ոմանց անցելոց՝ եկն գուժ բօթաբեր ի Կոստանդնուպօլսոյ, թէ նաւն ուխտաւորաց, յառաջ քան զճանապարհորդելն ի ծովն մեծ՝ խորտակեցաւ առաջի Արակիոյ:

Եւ դարձեալ ի Բիւզանդիա՝ զայլ նաւ վարձեցին եւ նա եւս՝ յետ քանի մի աւուր՝ մինչ ի տեղի իւրում էր, հարաւ ի սաստիկ հողմոյ եւ բեկաւ ընդ ողն:

Եւ լուեալ զայսպիսի գուժալի լուրս՝ յիշեցաք զբանս տեսլեանցն եւ ապուշ մնացաք: Եւ մինչ յայս վարանեալք, էհասս այլ իմն լուր չար քան զառաջինն, թէ ահա ընդ ուխտաւորացն դայ՝ անյազն ի չարիս՝ Բեւն երկրորդ՝ Պալլքէսերցին փոխանորդ եւ Վէպէլ. եւ յետ սակաւ աւուրց եկն եմուտ ի սուրբ քաղաքն՝ ունելով ի հօգի եւ ի մարմին իւր զբազմութիւն լէզէոն դիւանցն. կրկին նաբուզարդանն եւ չարագոյնն քան զհրեայսն. զի նոքա զպատմութեան Փրկչին մերոյ ոչ պատառեցին խնայելով ի նա. իսկ սա՝ ամենեւին անխնայ կո-

1 Աբալիս, այժմ Էրեյլէ. Մարմարա Ծովուն եւրոպական եզերքը, Թէքիրտաղի մօտ: Այսպիսի նաւաբեկութիւններ յաճախակի էին գրեթէ առաջաստանաւորուն համար. 1726ին ալ պատահած է նաւաբեկութիւն մը Երուսաղէմի ուխտաւորներուն, որոնց մէջ կը գտնուէր Գրիգոր զպրի Յայրմաւուրբի հրատարակութեան բարերարներէն Հովուենց մահտեսի Բարութիւնին փոքր եղբայրը՝ մահտեսի Ստեփաննոս (Յայրմաւուրբ):